

Մաքսային միության տեսությունը և ազդեցությունը բարեկեցության վրա

Համաշխարհային տնտեսության ամենից նշանակալի մաքսային միությունը Եվրոպական մաքսային միությունն է: Այն ներառում է Եվրոպական Միության բոլոր 28 անդամ երկրներին և Մոնակոյին: Երկկողմանի համաձայնագրերի հիման վրա այն ներառում է նաև Սան Մարինոն, Անդորրան և Թուրքիան: Վերջին երկու երկրների դեպքում գյուղատնտեսական մթերքները ներառված չեն:

Եվրասիական տնտեսական միությունը, որի անդամ է Հայաստանը, նույնպես մաքսային միություն է, որը ձգտում է նմանակել Եվրոպական միության հաջող փորձը: Սակայն Եվրասիական միության առաջատար երկիրը՝ Ռուսաստանը, տնտեսական տեսանկյունից անհամեմատ թերզարգացած և խոցելի է, քան Եվրոպական Միության առաջատար երկիրը՝ Գերմանիան:

Մաքսային միություններ են նաև.

- Մերկոսուրը – ներառում է Արգենտինան, Բրազիլիան, Պարագվայը, Ուրուգվայը:
- Անդեան միությունը – ներառում է Բոլիվիան, Կոլումբիան, Էկվադորը, Պերուն:
- Արաբական պետությունների համագործակցության խորհուրդը – ներառում է Սաուդիան Արաբիան, ԱՄԷ-ն, Քուվեյթը, Բահրեյնը, Քաթարը, Օմանը:

Նաֆթան մաքսային միություն չէ, այն ազատ առևտրի գոտի է:

Տնտեսական ինտեգրման մակարդակները

Տնտեսական ինտեգրման առաջին մակարդակը արտոնյալ առևտրի գոտին է: Այդ դեպքում անդամ երկրները լիովին կամ մասամբ ազատականացնում են որոշ ապրանքների առևտուրը: Օրինակ՝ Եվրոպական Միությունը GSP+ նախապատվությունների շրջանակում Հայաստանին շնորհել է արտոնյալ մուտքի հնարավորություն որոշ ապրանքների, օրինակ՝ մետաղների, տեքստիլի, սննդամթերքի առևտրում:

Տնտեսական ինտեգրման երկրորդ մակարդակը ազատ առևտրի գոտին է: Այդ դեպքում անդամ երկրները ազատականացնում են բոլոր ապրանքների փոխադարձ առևտուրը: Նաֆթան, որը միավորում է ԱՄՆ-ը, Կանադան և Մեքսիկան, ազատ առևտրի գոտի է:

Տնտեսական ինտեգրման երրորդ մակարդակը մաքսային միությունն է: Այդ դեպքում անդամ երկրները ի լրումն ազատ առևտրի գոտու միօրինակացնում են այլ երկրների հետ առևտրի կարգավորումը: Այսինքն՝ այլ երկրների հետ առևտրում սահմանում են միևնույն մաքսատուրքերը: Եվրասիական տնտեսական միությունը մաքսային միություն է:

Տնտեսական ինտեգրման չորրորդ մակարդակը ընդհանուր շուկան է: Այն ի լրումն մաքսային միության (այսինքն՝ ապրանքների ու ծառայությունների ազատ հոսքի) ենթադրում է անդամ երկրների միջև արտադրության գործոնների (կապիտալի ու աշխատանքի) ազատ տեղաշարժ:

Տնտեսական ինտեգրման հինգերորդ մակարդակը ամենամեծ միությունն է: Այն ի լրումն ընդհանուր շուկայի նշանակում է անդամ երկրների տնտեսական և կարգավորող

քաղաքականությունների որոշ միօրինակացում: Վերջինը իրականացվում է վերազգային մարմինների միջոցով, որոնք վերահսկում և ուղղորդում են այդ գործընթացը:

Տնտեսական ինտեգրման վեցերորդ մակարդակը արժուրային միությունն է: Այն ի լրումն տնտեսական միության նշանակում է անդամ երկրներում մեկ միասնական արժույթի ստեղծում, ինչն իր հերթին ենթադրում է տնտեսական քաղաքականությունների միօրինակացման ավելի բարձր մակարդակ:

Բարեկեցության վրա մաքսային միության ազդեցությունը

Ընդհանուր դեպքում մաքսային միությանը երկրի անդամակցության անտեսական նպատակահարմարությունը կարող ենք վերլուծել երկրի բարեկեցության վրա անդամակցության ազդեցության միջոցով:

Իսկ այդ ազդեցության ստատիկ վերլուծությունը հիմնվում է Հակոբ Վիների [1] առաջարկած «առևտրի ստեղծում» և «առևտրի շեղում» հասկացությունների վրա:

Առևտրի ստեղծումը տեղական համեմատաբար թանկ արտադրության փոխարինումն է մաքսային միությունից համեմատաբար էժան ներմուծմամբ, ինչը տեղի է ունենում միության անդամ երկրների միջև մաքսատուրքերի կրճատման հետևանքով: Առևտրի ստեղծումը, սովորաբար, բարելավում է բարեկեցությունը:

Առևտրի շեղումը միության ոչ անդամ երկրներից էժան ներմուծման փոխարինումն է անդամ երկրներից ավելի թանկ ներմուծմամբ: Այդ փոխարինումը տեղի է ունենում անդամ երկրների միջև առևտրի ազատականացման պատճառով, այնպես որ անդամ երկրներից անմաքս ներմուծումը դառնում է ավելի շահեկան, քան ոչ անդամ երկրներից մաքսը ներառյալ ներմուծումը: Առևտրի շեղումը, սովորաբար, կրճատում է բարեկեցությունը:

Առևտրի շեղումը

Ունենք երեք երկիր՝ Ա, Բ, Գ: Դիցուք՝ հագուստի արտադրության ծախսը Ա-ում \$100 է: Իսկ Բ-ի և Գ-ի արտադրողներն ավելի արդյունավետ են, և նրանց արտադրության ծախսն Ա-ի համեմատ ցածր է համապատասխանաբար \$25-ով և \$15-ով (աղ. 1):

Համարենք՝ տրանսպորտային ծախսը զրո է, իսկ շուկաները կատարյալ մրցակցային են: Ազատ առևտրի դեպքում Բ-ի արտադրողները, քանի որ ամենից արդյունավետն են, Ա-ի և Գ-ի արտադրողներին շուկայից դուրս կմղեն և կդառնան հագուստի միակ մատակարարը:

Աղյուսակ 1: Հագուստի գինը

	Երկիրը	Ա-ում	Բ-ում	Գ-ում
Արտադրության ծախսը և գինը ավտարկիայում		\$100	\$75	\$85
Գինը ազատ առևտրի դեպքում		\$75	\$75	\$75

Այժմ համարենք Ա-ն Բ և Գ երկրներից հագուստի ներմուծման նկատմամբ սահմանում է \$20 յուրահատուկ մաքսատուրք: Շեշտենք՝ մաքսատուրքը ոչ խտրական է և երկու երկրի համար նույնն է:

Բ-ի արտադրողները նույնիսկ \$20 մաքսատուրքը վճարելուց հետո Ա-ում հագուստը կվաճառեն \$5-ով էժան, քան Ա-ի արտադրողները (աղ. 2): Բայց Գ-ի արտադրողների գինը մաքսը վճարելուց հետո \$5-ով բարձր կլինի Ա-ի գնից: Ուստի՝ Բ-ի արտադրողները կշարունակեն մնալ շուկայի միակ մատակարարը:

Նկատենք՝ Ա-ում բացի Բ-ից այլ արտադրողներ չեն լինի, քանի որ համարում ենք՝ շուկաները կատարյալ մրցակցային են: Նույն պատճառով ապրանքի գինը հավասար է

արտադրության ծախսին: Հիշենք, սակայն, արտադրության ծախսը ներառում է նորմալ շահույթը:

Աղյուսակ 2: Հագուստի գինը Ա-ում, երբ մաքսատուրքը \$20 է

Արտադրող երկիրը	Ա	Բ	Գ
Հագուստի գինը Ա-ում			
Ա-ի \$20 ոչ խառակամ մաքսատուրքի դեպքում	\$100	\$95	\$105
Ա+Գ մաքսային միության դեպքում	\$100	\$95	\$85

Այսպիսով՝ նույնիսկ այն բանից հետո, երբ Ա-ն սահմանում է \$20 ներմուծման մաքսատուրք, միևնույնն է Ա-ի արտադրողները ոչինչ չեն արտադրում, և հագուստի միակ մատակարարը Բ-ն է: Բնականաբար, եթե Ա-ի յուրահատուկ մաքսատուրքը գերազանցի \$25-ը, ապա դա արդեն կլինի ազդեցական մաքսատուրք, և Ա-ն այլևս հագուստ չի ներմուծի ու ամբողջովին կապավիճի սեփական արտադրությանը:

Իսկ ի՞նչ կլինի, եթե Ա-ն և Գ-ն կազմեն մաքսային միություն: Այդ դեպքում նրանք, բնականաբար, կազատականացնեն փոխադարձ առևտուրը և Բ-ի նկատմամբ կսահմանեն ընդհանուր մաքսատուրք:

Համարենք, որ Ա+Գ մաքսային միությունը Բ-ի նկատմամբ սահմանում է միևնույն \$20 մաքսատուրքը: Արդյունքում՝ առևտրի հոսքերը արմատապես փոխվում են:

Նոր իրավիճակում Բ-ն այլևս Գ չի կարող արտահանել, քանի որ Բ-ի գինը մաքսը վճարելուց հետո՝ \$95, ավելի բարձր է, քան Գ-ի գինը՝ \$85: Ավելին, Բ-ն այլևս Ա չի կարող արտահանել, քանի որ անմաքս առևտրի շնորհիվ Գ-ի արտադրողները Ա-ի շուկայից Բ-ին դուրս կմղեն: Այսպես՝ անմաքս առևտրի շնորհիվ այժմ Գ-ն Ա-ում կարող է իրացնել \$85-ով, այնինչ Բ-ի գինը մաքսի հետևանքով \$95 է:

Ա+Գ մաքսային միությունում հագուստի միակ մատակարարը կդառնան Գ-ի արտադրողները: Հիշենք՝ նախքան մաքսային միությունը Գ-ում հագուստի արտադրություն ընդհանրապես չկար, և երեք երկրներում հագուստի միակ մատակարարը Բ-ի արտադրողներն էին: Մաքսային միության շնորհիվ, սակայն, Գ-ի արտադրողները Ա-ից և Գ-ից դուրս շարժեցին Բ-ի արտադրողներին:

Բայց Գ-ի արտադրողները Բ-ի արտադրողներին իրենց երկրից դուրս մղել չեն կարող, քանի որ նրանք ավելի արդյունավետ են: Բ-ում հագուստի արտադրությունը կպահպանվի, բայց միայն տեղական սպառման համար:

Մաքսային միության շնորհիվ Ա-ի սպառողների համար գինը \$10-ով նվազեց՝ \$95-ից \$85, բայց, միևնույն ժամանակ, Ա-ի կառավարությունը կորցրեց միավորի հաշվով \$20 մաքսատուրքը: Եթե կատարենք այն հերոսական ենթադրությունը, թե Ա-ի կառավարությունը մաքսատուրքի միջոցները ոչ թե վատնում էր, այլ ներդնում, ապա մաքսատուրքի կորուստը հասարակության համար բարեկեցության անկում է:

Իսկ Գ-ի սպառողների համար գինը \$10-ով բարձրացավ՝ \$75-ից \$85: Հիշենք, որ Գ-ն նախքան մաքսային միությունը մաքսատուրք չէր կիրառում և ներմուծում էր Բ-ից \$75-ով: Իսկ այժմ արտադրում է ինքնուրույն և \$85-ով:


Ա երկրի համար նկարագրվածը առևտրի շեղման օրինակ էր, քանի որ Բ-ից համեմատաբար էժան ներմուծումը փոխարինվեց Գ-ից համեմատաբար թանկ ներմուծմամբ: Իսկ Գ երկրի համար նկարագրվածը ներմուծման փոխարինման օրինակ էր:

Առևտրի շեղումը պատկերենք գրաֆիկորեն Ա երկրի օրինակով:

Դիցուք հագուստի պահանջարկը Ա-ում բացարձակ ոչ առածգական է (գծ. 1): Ա, Բ և Գ երկրների արտադրողները մատակարարում են հաստատուն գներով՝ համապատասխանաբար p_U , p_B և p_G , ընդ որում $p_U > p_G > p_B$: Բնականաբար, ազատ առևտրի դեպքում Ա-ում հագուստի միակ մատակարարը կլինի Բ-ն, իսկ Ա-ի սպառողների համար գինը կկազմի p_B :

Այժմ Ա երկիրը սահմանում է ոչ խտրական մաքսատուրք՝ t , այնպիսին, որ $p_U > p_B + t > p_G$: Այդ դեպքում Ա-ն, ինչպես նախկինում, հագուստ չի արտադրի և պահանջվող ամբողջ քանակը՝ q_U , կներմուծի Բ-ից: Ա-ի սպառողների համար գինը կկազմի $p_B + t$, իսկ կառավարության մաքսային եկամուտը կկազմի $m + n$:

Գծանկար 1: Առևտրի շեղումը Ա երկրում



Այնուհետև Ա և Գ երկրները կազմում են մաքսային միություն: Բնականաբար նրանք փոխադարձ առևտուրն ազատականացնում են և Բ-ից ներմուծման նկատմամբ սահմանում են ընդհանուր մաքսատուրք: Դիցուք վերջինը հավասար է t -ի:

Ա-ում սպառվող հագուստի արտադրությունը Բ-ից կտեղափոխվի Գ, և վերջինը կդառնա Ա-ի միակ մատակարարը: Ա-ի սպառողների համար գինը $p_B + t$ -ից կնվազի մինչև p_G : Միևնույն ժամանակ, Ա-ի կառավարության մաքսային եկամուտները կնվազեն $m + n$ -ով, որից m -ը կանցնի Ա-ի սպառողներին, իսկ n -ը՝ Գ երկրի արտադրողներին: Արդյունքում՝ Ա երկրի զուտ վնասը կկազմի n :

Աղյուսակ 3: Մաքսային միության ազդեցությունը Ա-ի բարեկեցության վրա

Սպառողի ավելցուկ	$+m$
Արտադրողի ավելցուկ	0
Մաքսային եկամուտ	$-(m + n)$
Զուտ օգուտ	$-n$

Այսպիսով՝ դառնալով մաքսային միության անդամ, Ա երկիրը վնասվեց, քանի որ առևտուրն առավել արդյունավետ Բ-ից շեղվեց դեպի նվազ արդյունավետ Գ: Նկատենք, եթե Ա-ն մաքսային միություն կազմեր ամենարդյունավետ արտադրողի՝ Բ-ի հետ, ապա ոչինչ չէր փոխվի, և արդյունքը կլիներ ճիշտ այնպիսին, ինչպես լիովին ազատ առևտրի դեպքում էր:

Առևտրի ստեղծումը

Շարունակելով նախորդ օրինակը ենթադրենք՝ Ա-ն Բ-ից և Գ-ից հագուստի ներմուծման նկատմամբ սահմանում է ոչ թե \$20, այլ \$30 յուրահատուկ մաքսատուրք:

Աղյուսակ 4: Հագուստի գինը Ա-ում, երբ մաքսատուրքը \$30 է

Արտադրող երկիրը	Ա	Բ	Գ
Հագուստի գինը Ա-ում ազատ առևտրի դեպքում	\$100	\$75	\$85
Ա-ի \$30 ոչ խտրական մաքսատուրքի դեպքում	\$100	\$105	\$115
Ա+Գ մաքսային միության դեպքում	\$100	\$105	\$85

Այս դեպքում մաքսատուրքն այնքան բարձր է, որ Ա-ի տեղական արտադրողները շուկայից ամբողջովին դուրս կմղեն արտերկրի արտադրողներին, և Ա-ն հագուստի պահանջարկը կբավարարի սեփական արտադրությամբ: Սպառողների համար գինը կկազմի \$100:

Եթե Ա-ն և Գ-ն կազմեն մաքսային միություն և Բ-ի նկատմամբ սահմանեն միևնույն \$30 մաքսատուրքը, ապա Ա-ն ինքնուրույն արտադրելու փոխարեն կսկսի ներմուծել Գ-ից:

Համոզվենք, որ այս դեպքում Ա-ն մաքսային միությունից շահում է:

Նախքան մաքսային միությունը՝ արտադրողի ավելցուկը զրո էր (\$100-ը կատարյալ մրցակցային գինն է, որը, ինչպես նշեցինք, հավասար է արտադրության բոլոր ծախսերի՝ ներառյալ նորմալ շահույթի հանրագումարին): Զրո էր նաև կառավարության մաքսային եկամուտը (երկիրը ոչ մի միավոր չէր ներմուծում, որ կառավարությունը վայելեր մաքս գանձելու հաճույքը):

Աղյուսակ 5: Մաքսային միության ազդեցությունը Ա-ի բարեկեցության վրա

Սպառողի ավելցուկ	+m
Արտադրողի ավելցուկ	0
Մաքսային եկամուտ	0
Զուտ օգուտ	+m

Մաքսային միություն կազմելուց հետո արտադրողի ավելցուկը դարձյալ զրո է (արտադրություն այժմ չկա, ուստի արտադրողի ավելցուկ չի կարող լինել): Զրո է նաև կառավարության մաքսային եկամուտը (երկիրը թեպետ ամբողջովին ներմուծում է, բայց մաքսային միության անդամ երկրից ներմուծումն անմաքս է): Դրանով իսկ՝ արտադրողի ավելցուկը և մաքսային եկամուտները չեն փոխվել (ո՛չ ավելացել են, ո՛չ նվազել):

Սակայն փոխվել է սպառողի ավելցուկը: Սպառողի համար գինը \$100-ից նվազել է \$85: Միավորի հաշվով սպառողի ավելցուկն ավելացել է \$15-ով: Հետևաբար՝ Ա-ի բարեկեցությունը մաքսային միությանն անդամակցելու արդյունքում բարձրացել է:

- Բայց չէ՞ որ Ա-ն դադարել է արտադրել: Մի՞թե դա բարեկեցության կորուստ չէ, – հարցնում է վրդովված պաշտոնյան, որն անգոր է ընկալել տարրական տնտեսագիտությունը:
- Ո՛չ, քանի որ տեղական արտադրությունն անարդյունավետ է, – անվրդով պատասխանում է առաջին կուրսեցին և շարունակում, – դրա վկայությունն է այն, որ տեղական արտադրության գինը բարձր է ներմուծման գնից: Ա-ն կարող է


զարգանալ, երբ իր ռեսուրսներն օգտագործի այն ոլորտներում, որոնցում մրցունակ է:

Նկարագրվածն առևտրի ստեղծման օրինակ է, քանի որ Ա-ի տեղական համեմատաբար անարդյունավետ արտադրությունը փոխարինվեց Գ-ից համեմատաբար էժան ներմուծմամբ: Պատկերենք այն գրաֆիկորեն:

Սկզբում Ա-ն սահմանում է ոչ խտրական t^* մաքսատուրք այնպիսին, որ $p_U < p_F + t^*$: Հագուստի պահանջարկը՝ q_U , Ա-ն ամբողջությամբ կբավարարի տեղական արտադրությամբ, և սպառողների համար գինը կկազմի p_U (գծ. 2):

Բայց երբ Ա-ն ու Գ-ն կազմեն մաքսային միություն, ապա Ա-ի սպառողների համար գինը p_U -ից կնվազի p_F , և Ա-ի բարեկեցությունը կբարձրանա (աղ. 5):

Գծանկար 2: Առևտրի ստեղծումը Ա երկրում



Այսպիսով՝ մաքսային միությունը, սովորաբար, հանգեցնում է բարեկեցության անկման, երբ առկա է առևտրի շեղում, և բարեկեցության աճի, երբ առկա է առևտրի ստեղծում:

Սակայն պարտադիր չէ, որ առևտրի շեղումը կրճատի բարեկեցությունը: Դիտարկենք նման իրավիճակ:

Համարենք Ա երկրի պահանջարկի առաձգականությունը զրոյից տարբեր վերջավոր է (գծ. 3): Ազատ առևտրի դեպքում Ա-ն հագուստն ամբողջովին կներմուծի Բ երկրից: Ներմուծման քանակը կլինի q_{U3} , իսկ գինը՝ p_F :

Այնուհետև Ա-ն սահմանում է ներմուծման ոչ խտրական t^{**} մաքսատուրք այնպիսին, որ $p_U > p_F + t^{**}$: Այդ դեպքում Ա-ն շարունակում է ներմուծել Բ-ից, բայց ներմուծման քանակը կրճատվում է՝ q_{U1} : Իսկ սպառողների համար գինը դառնում է $p_F + t^{**}$: Կառավարության մաքսային եկամուտը կազմում է $e + n$:


Եթե Ա-ն Գ-ի հետ կազմի մաքսային միություն, ապա Գ-ն կփոխարինի Բ-ին՝ իբրև Ա-ին մատակարարող երկիր:

Ա-ի սպառողների համար գինը $p_F + t^{**}$ -ից կնվազի p_F : Քանի որ պահանջարկի առաձգականությունը զրո չէ, ապա գնի անկումը կընդլայնի պահանջարկը՝ q_{U1} -ից q_{U2} : Գնի անկման և պահանջարկի աճի շնորհիվ սպառողի ավելցուկը կընդլայնվի $e + m$ -ով:

Ա-ի կառավարությունը կկորցնի $e + n$ մաքսային եկամուտը, որից e -ն բաժին կընկնի Ա-ի սպառողներին, իսկ n -ը՝ Գ-ի արտադրողներին:

Վերջին հաշվով Ա-ի բարեկեցությունը կփոխվի $m - n$ չափով (աղ. 6): Բնականաբար, բարեկեցությունը կընդլայնվի, եթե $m - n > 0$, և կկրճատվի, եթե $m - n < 0$:

Գծանկար 3: Առևտրի շեղումը կարող է բարելավել բարեկեցությունը



Այսպիսով՝ առևտրի շեղումը, նույնպես կարող է բարելավել բարեկեցությունը:

Աղյուսակ 6: Մաքսային միության ազդեցությունը Ա-ի բարեկեցության վրա, երբ պահանջարկի առաձգականությունը զրոյից տարբեր վերջավոր է


Սպառողի ավելցուկ	$+(e + m)$
Արտադրողի ավելցուկ	0
Մաքսային եկամուտ	$-(e + n)$
Զուտ օգուտ	$m - n$

Քննարկում

Իրավիճակ 1

Ա երկրում տեքստիլի պահանջարկը բացարձակ ոչ առաձգական է (զծ. 4): Ընդ որում, Ա երկրում Բ և Գ երկրների արտադրողները տեքստիլն առաջարկում են հաստատուն p_B և p_G գներով ($p_G > p_B$): Իսկ Ա-ի արտադրողների առաջարկը զրոյից տարբեր վերջավոր առաձգական է:

Գծանկար 4: Առևտրի շեղումը և առևտրի ստեղծումը



ա) Ա-ն սահմանում է ոչ խտրական t մաքսատուրք, այնպես որ $p_U > p_B + t > p_G$:

Տեքստիլի նկատմամբ Ա-ի ընդհանուր (ոչ առաձգական) պահանջարկը $q_{U,1}$ է: Ոչ խտրական t մաքսատուրքի դեպքում Ա երկիրը կարտադրի $q_{U,2}$ քանակ, իսկ մնացածը՝ $q_{U,1} - q_{U,2}$, կներմուծի Բ երկրից՝ $p_B + t$ գնով: Քանի որ շուկաները կատարյալ մրցակցային են, ապա Ա-ում տեքստիլի հավասարակշիռ գինը կկազմի $p_B + t$:

Կառավարության մաքսային եկամուտը կկազմի $n + k$:

բ) Ա-ն և Գ-ն կազմում են մաքսային միություն:

Գ-ի հետ մաքսային միություն կազմելուց հետո Ա-ն տեքստիլ կսկսի ներմուծել Գ-ից՝ ավելի ցածր՝ p_G , գնով: Տեղական արտադրությունը կկրճատվի մինչև $q_{U,3}$, իսկ ներմուծումը կընդլայնվի մինչև $q_{U,1} - q_{U,3}$:

Այս դեպքում ունենք և՛ առևտրի շեղում (Բ-ից ներմուծումը փոխարինվել է Գ-ից ներմուծմամբ), և՛ առևտրի ստեղծում (տեղական անարդյունավետ արտադրությունը փոխարինվել է Գ-ից ներմուծմամբ):

Աղյուսակ 7: Մաքսային միության ազդեցությունը Ա երկրի բարեկեցության վրա

Սպառողի ավելցուկ	$+(e + m + n)$
Արտադրողի ավելցուկ	$-e$
Մաքսային եկամուտ	$-(n + k)$
Զուտ օգուտ	$m - k$

e -ն արտադրողի ավելցուկի կրճատումն է, n -ը՝ կառավարության մաքսային եկամտի կրճատումը, m -ը՝ անարդյունավետ արտադրության կորստի կրճատումը: e -ն, n -ը, m -ը

անցնում են սպառողին: k -ն կառավարության մաքսային եկամտի կրճատումն է, որն անցնում է \mathcal{F} երկրի արտադրողներին:

Այսպիսով՝ երկիրը շահում է, երբ տեղական անարդյունավետ արտադրությունը փոխարինում է ներմուծմամբ: Միևնույն ժամանակ, երկիրը կորցնում է, երբ էժան ներմուծումը փոխարինում է ավելի թանկ ներմուծմամբ: Հանրագումարում երկիրը շահում է, եթե $m - k > 0$, բայց կորցնում է, եթե $m - k < 0$:

Իրավիճակ 2

Ա-ն փոքր երկիր է և \mathcal{F} մեծ երկրի հետ միևնույն ազատ առևտրի գոտում է:


Ներկայում Ա-ում գրքերը վերամշակվում են պետքարանի թուղթ արտադրելու նպատակով: Սակայն Ա-ում դեռևս տպագրվում են գրքեր (փոքր տպաքանակով, ինչպես հարյուրամյակներ առաջ այդ երկրի գրիչները մագաղաթներ էին ծաղկում):

Այդ գրքերի տպագրության համար Ա-ն \mathcal{F} երկրից ներմուծում է թուղթ (ուշադրություն՝, թուղթը ներմուծվում է \mathcal{F} -ից, ոչ թե \mathcal{F} -ից): Ա-ի փոքրիկ շուկայի համար \mathcal{F} երկրի առաջարկը կատարյալ առաձգական է: \mathcal{F} -ում թղթի արտադրությունն այնքան արդյունավետ է, որ չնայած ներմուծման t մաքսատուրքին և \mathcal{F} -ի հետ ազատ առևտրին՝ Ա-ն թղթի ներքին պահանջարկն ամբողջությամբ բավարարում է \mathcal{F} -ից ներմուծելու միջոցով:

Ա և \mathcal{F} երկրները կազմում են մաքսային միություն, ու \mathcal{F} երկրից թղթի ներմուծման նկատմամբ սահմանում են $2t$ մաքսատուրք:

Մասնակի հավասարակշռության ստատիկ վերլուծությունում ինչպիսի՞ն կլինի մաքսային միության ազդեցությունը բարեկեցության վրա, եթե $p_{\mathcal{F}} + 2t > p_{\mathcal{F}}$:

Գծանկար 5: Մաքսային միությունը հանգեցնում է առևտրի շեղման



Ազատ առևտրի դեպքում Ա-ն կներմուծի q_1 քանակ՝ $p_{\mathcal{F}}$ գնով (գծ. 5): Բայց քանի որ սահմանված է ներմուծման t մաքսատուրք, ապա երկիրը ներմուծում է q_2 քանակ՝ $p_{\mathcal{F}} + t$ գնով:

Աղյուսակ 8: t մաքսատուրքի ազդեցությունը Ա երկրի բարեկեցության վրա

Սպառողի ավելցուկ	$-(1 + 2 + 3 + 4)$
Արտադրողի ավելցուկ	0
Մաքսային եկամուտ	$+(1 + 2 + 3)$
Զուտ օգուտ	-4

Ազատ առևտրի համեմատ երկիրը կորցնում է գծ. 5-ի «4» տիրույթի չափով (աղ. 8):

Բ-ի հետ մաքսային միություն կազմելուց և Գ-ից ներմուծման նկատմամբ մաքսատուրքը 2t դարձնելուց հետո տեղի է ունենում առևտրի շեղում (առևտրի ստեղծումը զրո է, քանի որ Ա-ում թղթի արտադրություն չկար):

Աղյուսակ 9: Մաքսային միության ազդեցությունը Ա երկրի բարեկեցության վրա

Սպառողի ավելցուկ	$-(5 + 6 + 7)$
Արտադրողի ավելցուկ	0
Մաքսային եկամուտ	$-(1 + 2 + 3)$
Զուտ օգուտ	$-(1 + 2 + 3 + 5 + 6 + 7)$

Մասնավորապես, Գ-ից ներմուծելու փոխարեն Ա-ն սկսում է թուղթն ամբողջությամբ ներմուծել Բ-ից: Ներմուծման գինը բարձրանում է $p_q + t$ -ից p_q , ներմուծման քանակը Q_2 -ից նվազում է Q_3 : Կառավարությունը կորցնում է մաքսային եկամուտները, սպառողի ավելցուկն էլ ավելի է կրճատվում (աղ. 9):

Վերջին հաշվով, թղթի գնի աճն էլ ավելի է կրճատում գրատպության գրավչությունը:

Իրավիճակ 3

Ա-ն փոքր երկիր է և Բ մեծ երկրի հետ միևնույն ազատ առևտրի գոտում է:

Ա-ի զավակները առանձնակի խանդաղատանքով են վերաբերվում այդ երկրում աճող մի մրգի, որին օտարները այդ երկրի անունով են կոչում: Իսկ այդ երկրի կառավարությունը գործվանքով պաշտպանում է այդ մրգի ներքին շուկան Գ երկրի մրցակցությունից:

Բայց երբ Ա-ն և Բ-ն կազմում են մաքսային միություն, այդ մրգի ներմուծման մաքսատուրքը վերացվում է:

Մասնակի հավասարակշռության վերլուծությունում ինչպիսի՞ն կլինի մաքսային միության ազդեցությունը բարեկեցության վրա կարճատև և երկարատև ժամանակաշրջաններում:


Ի տարբերություն թղթի, այս մրգի դեպքում Ա-ում առկա է տեղական արտադրություն: Ներմուծման t մաքսատուրքի դեպքում երկիրը սպառում է Q_2 քանակ, որի փոքր մասը՝ $Q_2 - Q_3$, ներմուծում է Գ երկրից: Սպառողների համար գինը $p_q + t$ է:

$S_{A,q}$ -ն երկրի կարճատև առաջարկն է, իսկ $S_{B,q}$ -ն երկարատև առաջարկն է: Կարճատևում առաջարկի առաձգականությունը, բնականաբար, փոքր է, քան՝ երկարատևում:

Այսպես՝ որոշ տարիների թեպետ տեղի է ունենում ցրտահարություն, և բերքի զգալի մասը կորչում է, սակայն մնացած մասի գինը բարձրանում է, և կորուստը զգալիորեն փոխհատուցվում է: Որոշ տարիներ էլ այնքան բերքառատ են լինում, որ գինը կտրուկ նվազում է: Ամեն դեպքում այդ մրգի ընդհանուր այգիների մակերեսը հարաբերականորեն կայուն է, քանի որ արտաքին մրցակցությունն աննշան է, իսկ միջին եկամտաբերությունը համադրելի է հողի օգտագործման այլընտրանքային տարբերակների եկամտաբերությանը:

Բայց երբ մաքսային միության հետևանքով արտաքին մրցակցությունը սաստկանա, ապա միջին գինը պերմանենտ կնվազի: Արդյունքում՝ միջին եկամտաբերությունը կկրճատվի:

Գծանկար 6: Մաքսային միության կարճատև և երկարատև ազդեցությունը



Բ-ի հետ մաքսային միություն կազմելուց և Գ-ից ներմուծման մաքսատուրքը վերացնելուց հետո տեղի է ունենում առևտրի ստեղծում (առևտրի շեղում տեղի չի ունենում, քանի որ Բ-ից այդ մրգի ներմուծումը շահեկան չէ):

Սպառողների համար գինը նվազում է p_q :

Աղյուսակ 10: t մաքսատուրքի ազդեցությունը Ա երկրի բարեկեցության վրա կարճատևում

Սպառողի ավելցուկ	$-(1 + 2 + 3 + 4 + 5)$
Արտադրողի ավելցուկ	$+(1 + 2)$
Մաքսային եկամուտ	$+4$
Զուտ օգուտ	$-(3 + 5)$

Կարճատև ժամանակաշրջանում տեղական արտադրությունը q_3 -ից կրճատվում է q_4 , իսկ երկարատև ժամանակաշրջանում կրճատվում է մինչև q_5 :

Կառավարությունը կորցնում է մաքսային եկամուտները (որոնք համեմատաբար փոքր էին), արտադրողի ավելցուկը զգալիորեն կրճատվում է, բայց նշանակալիորեն ընդլայնվում է սպառողի ավելցուկը:

Աղյուսակ 11: Կարճատևում մաքսային միության ազդեցությունը Ա երկրի բարեկեցության վրա

Սպառողի ավելցուկ	$+(1 + 2 + 3 + 4 + 5)$
Արտադրողի ավելցուկ	$-(1 + 2)$
Մաքսային եկամուտ	-4
Զուտ օգուտ	$+(3 + 5)$

Նկատենք՝ 3 և 5 տիրույթներն արտահայտում են առևտրի ստեղծման արդյունքում երկրի բարեկեցության աճը: Կրկնենք՝ 3 և 5 տիրույթները բնութագրում են առևտրի ստեղծումը:

Երկարատև ժամանակաշրջանում արտադրության հետագա կրճատումն էլ ավելի է նվազեցնում արտադրողի ավելցուկը:

Մեզ մնում է միայն հուսալ, որ տնտեսությունում կատարվեն համապատասխան խթաններ, որոնց շնորհիվ արտադրողները կվերամասնագիտանան այլ ոլորտներում կամ կգտնեն տվյալ պտղի արտադրությունում ավելի մեծ հավելյալ արժեք ստեղծելու ուղիներ:

Աղյուսակ 12: Երկարատևում մաքսային միության ազդեցությունը Ա երկրի բարեկեցության վրա

Սպառողի ավելցուկ	0
Արտադրողի ավելցուկ	$-(6 + 7)$
Մաքսային եկամուտ	0
Զուտ օգուտ	$-(6 + 7)$

Հետզուրպոյն: Մաքսային միության շրջանակում երրորդ երկրների նկատմամբ մաքսատուրքերը, սովորաբար, բարձրացվում են, ոչ թե իջեցվում: Հետևաբար՝ ինչո՞ւ այդ մրգի դեպքում տեղի ունեցավ իջեցում:

Պատճառն այն է, որ իջեցումը կամ բարձրացումը թելադրվում է մաքսային միության դոմինանտ երկրի շահերով: Տվյալ դեպքում նախքան մաքսային միության ձևավորումը Բ-ն այդ մրգի ներմուծման նկատմամբ ի տարբերություն Ա-ի մաքսատուրք չէր սահմանել:

Իսկ մաքսային միության շրջանակում բոլոր անդամ երկրների մաքսատուրքերն այլ երկրներից ներմուծման նկատմամբ պետք է լինեն նույնը: Ուստի՝ մաքսային միության ձևավորումից հետո Բ-ն իր զրոյական մաքսատուրքը պահպանեց և մյուսները հետևեցին նրան:

Իրավիճակ 4

Ա երկիրը Բ երկրից, ինչպես նաև մնացյալ աշխարհից՝ Գ-ից մալուխի ներմուծման նկատմամբ սահմանել է ոչ խտրական t մաքսատուրք: Ա երկրի համար մնացյալ աշխարհի՝ Գ-ի առաջարկը՝ S^G , կատարյալ առաձգական է: Ա երկրի առաջարկն ու պահանջարկը S^A և D^A են:

Ա և Բ երկրները կազմում են մաքսային միություն: Մաքսային միության ընդհանուր առաջարկն Ա-ում S^{A+B} է (Ա երկրի տեղական առաջարկի և Բ երկրից ներմուծման հանրագումարը):

Մասնակի հավասարակշռության ստատիկ վերլուծությունում պարզենք մաքսային միության ազդեցությունը Ա երկրի բարեկեցության վրա:


Ազատ առևտրի դեպքում Ա-ն մալուխ չի արտադրի և ամբողջությամբ կներմուծի Գ-ից: Ներմուծումը կկազմի Q_5 , գինը՝ p_1 :

Ա-ում ոչ խտրական t մաքսատուրք սահմանելու դեպքում մալուխի գինը կկազմի $p_1 + t$, տեղական արտադրությունը՝ Q_2 , սպառումը՝ Q_3 , ներմուծումը՝ $Q_3 - Q_2$:

Ա-ի սպառողները Գ-ից ներմուծելու դիմաց վճարում են $\gamma + \theta + \omega$, որից ω -ն բաժին է ընկնում Գ-ի արտադրողներին, իսկ $(\gamma + \theta)$ յուրացնում է կառավարությունն իբրև մաքս:

Եթե Ա-ն և Գ-ն ձևավորեն մաքսային միություն, ապա ազատ առևտրի վիճակը կվերականգնվի: Այդ դեպքում Ա-ում սպառումը դարձյալ կկազմի Q_5 , որն ամբողջությամբ կներմուծվի Գ-ից:

Գծանկար 7: Առևտրի շեղումը և առևտրի ստեղծումը մաքսային միության հետևանքով



Բայց եթե մաքսային միություն կազմեն Ա-ն և Բ-ն, ու մնացյալ աշխարհի նկատմամբ սահմանեն միևնույն t մաքսատուրքը, ապա Ա-ում փաստացի առաջարկի կորը կլինի S^{U+F} (քանի որ արտահանում չկա, ապա փաստացի առաջարկը հավասար է տեղական արտադրության և Բ-ից ներմուծման գումարին):

$U+F$ մաքսային միության ձևավորումից հետո շուկան կհավասարակշռվի e կետում: Սպառողների համար գինը կկազմի p_2 : Վերջինն ավելի ցածր է, քան ոչ խտրական t մաքսատուրքի դեպքում գինն էր՝ $p_1 + t$: Գնի անկման արդյունքում Ա-ում արտադրությունը կկրճատվի q_2 -ից q_1 , սպառումը կընդլայնվի q_3 -ից q_4 , ներմուծումը կընդլայնվի ($q_3 - q_2$)-ից ($q_4 - q_1$), որն ամբողջությամբ կիրականացվի Բ երկրից:

Սպառման աճի արդյունքում սպառողի ավելցուկը կընդլայնվի $\alpha + \beta + \gamma + \delta$ չափով: Դրանից α -ն արտադրողի ավելցուկի կրճատումն է, γ -ն՝ կառավարության մաքսային եկամուտների կրճատումը:

β -ն և δ -ն բնութագրում են առևտրի ստեղծումը: Դրա ազդեցությունը դրական է, քանի որ տեղական թանկ արտադրությունը փոխարինվել է մաքսային միությունից էժան ներմուծմամբ: Մասնավորապես, β -ն բնութագրում է ռեսուրսների ավելի արդյունավետ վերաբաշխումը, իսկ δ -ն՝ սպառման բավարարվածության աճը:

Մաքսային միության ձևավորման հետևանքով կառավարության մաքսային եկամուտները կկրճատվեն $\gamma + \theta$ չափով, որից θ -ն կանցնի Բ երկրի արտադրողներին: θ -ն բնութագրում է առևտրի շեղումը, այսինքն Գ երկրից էժան ներմուծման փոխարինումը Բ երկրից համեմատաբար թանկ ներմուծմամբ:

Աղյուսակ 13: Մաքսային միության ազդեցությունը Ա երկրի բարեկեցության վրա

Սպառողի ավելցուկ	$+(\alpha + \beta + \gamma + \delta)$
Արտադրողի ավելցուկ	$-\alpha$
Մաքսային եկամուտ	$-(\gamma + \theta)$
Զուտ օգուտ	$\beta + \delta - \theta$

Արդյունքում, եթե առևտրի ստեղծումը՝ $\beta + \delta$, գերազանցում է առևտրի շեղմանը՝ θ , ապա Ա երկրի բարեկեցությունը մաքսային միության անդամակցությունից բարելավվել է: Հակառակ դեպքում նվազել է:

Իրավիճակ 5

Երկու փոքր երկրներ՝ Ա և Բ, կազմում են մաքսային միություն: Երկրներից յուրաքանչյուրում պղնձի ներքին առաջարկը և պահանջարկը տրված են համապատասխանաբար S^U, D^U, S^B, D^B ուղիղներով (գծ. 8):

Համաշխարհային գինը p^q է:


Նախքան մաքսային միություն կազմելը պղնձի ներմուծման մաքսատուրքը Ա-ում և Բ-ում համապատասխանաբար t_U և t_B է: Երկու երկրներում էլ նախքան մաքսային միությունը պղնձը և՛ արտադրվում, և՛ մնացյալ աշխարհից ներմուծվում էր: Ներմուծումը համապատասխանաբար կազմում էր M^U և M^B :

Մաքսային միություն կազմելուց հետո երկու երկրներում ձևավորվում է ապրանքի միասնական գին (քանի որ երկրների միջև առևտուրն ազատականացվում է, իսկ տրանսպորտային ծախսերը համարում ենք, որ զրո են):

Հնարավոր է հավասարակշիռ գնի ձևավորման երկու տարբերակ:

p^* -ով նշանակենք այն գինը, որը կձևավորվի մաքսային միությունում, եթե այլ երկրներից ներմուծում չլինի (մաքսային միության ավտարկիայի գին): Մնացյալ աշխարհից մրցակցության բացակայության դեպքում մաքսային միության առավել արդյունավետ (ցածր ծախսով) երկիրը պղնձը կարտահանի մյուս երկիր: Մեր օրինակում (գծ. 8) Ա-ն կլինի արտահանող, Բ-ն՝ ներմուծող երկիրը:

Գծանկար 8: Մաքսային միության ազդեցությունը երկու երկրների բարեկեցության վրա



Արտահանող երկրում p^* հավասարակշիռ գինը ձևավորվում է այդ երկրի առաջարկի՝ S^U , և մաքսային միության ընդհանուր պահանջարկի՝ D^{U+B} , հավասարակշռման կետում (D^{U+B} -ն Ա

երկրի թողարկման նկատմամբ ընդհանուր պահանջարկն է, որը հավասար է Ա-ի ներքին պահանջարկի՝ D^U , և Բ-ի ներմուծման պահանջարկի՝ $D^B - S^B$, գումարին):

Ներմուծող երկրում p^* -ը ձևավորվում է այդ երկրի պահանջարկի՝ D^B , և մաքսային միության ընդհանուր առաջարկի՝ S^{U+B} , հավասարակշռման կետում (S^{U+B} -ն Բ երկրում ընդհանուր առաջարկն է, որը հավասար է Բ-ի ներքին առաջարկի՝ S^B , և Ա-ի արտահանման առաջարկի՝ $S^U - D^U$, գումարին):

Բնականաբար, երկու երկրներում այդ հավասարակշիռ գինը կլինի նույնը:

Եթե մաքսային միության մաքսատուրքը՝ t^* , սահմանվում է այնպես, որ մնացյալ աշխարհից ներմուծման գինը՝ $p^q + t^*$, գերազանցում է p^* -ը, ապա մնացյալ աշխարհից ներմուծում չի կատարվի (զծ. Տ-ում $p^q + t^*$ ցույց տրված չէ):

Այդ դեպքում մաքսային միության հավասարակշիռ գինը կլինի p^* -ը, և Բ-ն մնացյալ աշխարհից ներմուծելու փոխարեն կներմուծի միայն Ա-ից: Իսկ Ա-ն ներմուծողից կզառնա արտահանող և մնացյալ աշխարհից ներմուծելու փոխարեն կսկսի արտահանել Բ երկիր:

Հակառակ դեպքում, եթե մաքսային միության մաքսատուրքն այնպիսին է, որ $p^q + t^*$ ցածր է p^* -ից, ապա մաքսային միության հավասարակշիռ գինը կլինի $p^q + t^*$:

Այսպիսով՝

$$p^q + t^* \geq p^* \qquad p^*$$

$$p^q + t^* < p^* \qquad \text{մաքսային միության գինը} \qquad p^q + t^*$$

Դիտարկենք առաջին դեպքը, երբ $p^q + t^* \geq p^*$, և մաքսային միության գինը p^* է:

Մաքսային միության կազմման արդյունքում Բ-ի ներմուծումը ընդլայնվում է M^B -ից մինչև \bar{M}^B : Նկատենք՝ $\bar{M}^B = X^U$:

Աղյուսակ 14: Մաքսային միության ազդեցությունը Բ երկրի բարեկեցության վրա

Սպառողի ավելցուկ	$+(w + e + f + n)$
Արտադրողի ավելցուկ	$-w$
Մաքսային եկամուտ	$-(f + m)$
Զուտ օգուտ	$e + n - m$

m փերուլթն արտահայտում է առևտրի շեղումը, քանի որ մնացյալ աշխարհից ներմուծումը փոխարինվել է մաքսային միության անդամ երկրից ավելի թանկ ներմուծմամբ: Մաքսային միության ձևավորման հետևանքով Բ-ն կորցնում է իր մաքսային եկամուտները՝ $m + f$, որից f -ն անցնում է Բ երկրի սպառողներին, իսկ m -ը՝ Ա երկրի արտադրողներին:

e + n փերուլթն արտահայտում է առևտրի ստեղծումը: Դրանք նախկին t^B մաքսատուրքի անարդյունավետության կորուստներն են: Բ-ի սպառողները շահում են, քանի որ գինը $p^q + t^*$ -ից նվազել է p^* :

Ինչ վերաբերում է Ա-ին, ապա մաքսային միության արդյունքում Ա-ն մնացյալ աշխարհից M^U քանակ ներմուծելու փոխարեն սկսում է Բ երկիր արտահանել X^U քանակ ($X^U = \bar{M}^B$): Ա-ում սպառողի ավելցուկը կրճատվում է $b + q$ չափով, իսկ արտադրողի ավելցուկն ընդլայնվում է $a + q$ չափով: Բացի այդ, Ա-ի կառավարության մաքսային եկամուտները կրճատվում են k -ով, քանի որ երկիրը դադարեցնում է Գ-ից ներմուծումը:

Աղյուսակ 15: Մաքսային միության ազդեցությունը Ա երկրի բարեկեցության վրա

Սպառողի ավելցուկ	$-(q + b)$
Արտադրողի ավելցուկ	$+(q + a)$
Մաքսային եկամուտ	$-k$
Զուտ օգուտ	$a - b - k$

Ընդհանուր դեպքում մաքսային միությունների համար կարող են նշել հետևյալ երեք օրինաչափությունները.


1. Որքան ցածր է սկզբնական մաքսատուրքը (ինչպես՝ Հայաստանում), այնքան հավանական է, որ մաքսային միության կազմման արդյունքում առևտրի շեղումը գերակշռի առևտրի ստեղծմանը:
2. Որքան անարդյունավետ է երկիրը (ցածր արտադրողականության պատճառով ծախսերը մնացյալ աշխարհի համեմատ բարձր են, ինչպես՝ Հայաստանում), այնքան հավանական է, որ առևտրի շեղման էֆեկտը լինի նշանակալի:
3. Որքան բարձր է մաքսային միության ընդհանուր մաքսատուրքը, այնքան հավանական է, որ առևտրի շեղումը լինի ավելի մեծ, իսկ առևտրի ստեղծումը՝ ավելի փոքր:

Գրականություն

1. Viner, J., *The customs union issue*. 2014: Oxford University Press.

Իրավիճակ 5.1

Նախ դիտարկենք այն դեպքը, երբ մաքսային միությունը մնացյալ աշխարհից ներմուծման նկատմամբ սահմանում է արգելակող մաքսատուրք:



	Ա երկիր	Բ երկիր
Պահանջարկ	$q = 60 - 1/2p$	$q = 90 - 1/2p$
Առաջարկ	$q = -5 + 1/2p$	$q = -15 + 1/2p$
Սկզբնական մաքսատուրք	100%	375%

Հավասարակշռությունը նախան մաքսային միությունը, երբ համաշխարհային գինը \$20 է:

Քանի որ մնացյալ աշխարհից ներմուծման գինը (մաքսատուրքը ներառյալ) ցածր է երկրներից յուրաքանչյուրի ավտարկիայի գնից, ապա երկուսն էլ ներմուծում են:

	Ա երկիր	Բ երկիր		Ա երկիր	Բ երկիր
Ներքին գին	\$40	\$95	Սպառողի ավելցուկ	1600	1806.3
Պահանջարկ	40	42.5	Արտադրողի ավելցուկ	225	1056.3
Առաջարկ	15	32.5	Կառավարության եկամուտ	500	750
Ավելցուկային պահանջարկ	25	10	Ընդհանուր ավելցուկ	2325	3612.5

Հավասարակշռությունը մաքսային միության ձևավորումից հետո, երբ միության մաքսատուրքը 350% է

Մնացյալ աշխարհից ներմուծման գինը (ներառյալ 350% մաքսատուրքը) \$90 է: Եթե այն բարձր է մաքսային միության ավտարկիայի գնից, ապա Բ երկիրն ամբողջությամբ կներմուծի Ա-ից:

Մաքսային միության ավտարկիայի գինը պարզելու համար որոշենք մաքսային միության ավտարկիայի հավասարակշռությունը, որը ձևավորվում է երբ ընդհանուր առաջարկը հավասարվում է ներմուծող Բ երկրի պահանջարկին կամ նույնն է, երբ ընդհանուր պահանջարկը հավասարվում է արտահանող Ա երկրի առաջարկին:

Այսպես՝ Ա-ի ավելցուկային առաջարկը հավասար է $(-5 + 1/2p) - (60 - 1/2p) = -65 + p$: Վերջինը գումարենք Բ-ի առաջարկին՝ Բ-ում Ա-ի և Բ-ի ընդհանուր առաջարկը ստանալու համար. $(-65 + p) + (-15 + 1/2p) = -80 + 1.5p$: Վերջինն իր հերթին հավասարեցնենք Բ-ի պահանջարկին՝ հավասարակշռությունը ստանալու համար. $-80 + 1.5p = 90 - 1/2p \Rightarrow p = 85$: Այսինքն՝ Ա-ի կողմից առաջարկվող գինն ավելի ցածր է, քան մնացյալ աշխարհից ներմուծման (մաքսատուրքը ներառյալ) գինն է:

Այդ պատճառով մաքսային միություն ձևավորելուց հետո Բ երկիրը կնախընտրի ամբողջովին ներմուծել Ա-ից, ոչ թե մնացյալ աշխարհից (թեպետ մնացյալ աշխարհը բազմակի արդյունավետ է, քան Ա-ն, սակայն 350% ընդհանուր մաքսատուրքի շնորհիվ Ա-ն գրավում է Բ-ի շուկան):



Նկատենք, որ մեր օրինակում ընդհանուր ավելցուկը երկու երկրում էլ մաքսային միության ձևավորման արդյունքում նվազել է:

	Ա երկիր	Բ երկիր
Մաքսային միության գին	85	85
Պահանջարկ	17.5	47.5
Առաջարկ	37.5	27.5
Ավելցուկային առաջարկ	20	-20

	Ա երկիր	Բ երկիր
Սպառողի ավելցուկ	306.3	2256.3
Արտադրողի ավելցուկ	1406.3	756.3
Կառավարության եկամուտ	0	0
Ընդհանուր ավելցուկ	1712.5	3012.5

Իրավիճակ 5.2

Այժմ դիտարկենք այն դեպքը, երբ մնացյալ աշխարհից ներմուծման մաքսատուրքն արգելակող չէ: Այս դեպքում Բ երկիրը կներմուծի և՛ Ա-ից, և՛ մնացյալ աշխարհից:



Հավասարակշռությունը մաքսային միության ձևավորումից հետո, երբ միության մաքսատուրքը 300% է

Պարզել ենք, որ մաքսային միության ավտարկիայի հավասարակշիռ գինը \$85 է: Քանի որ 300% մաքսատուրքի դեպքում մնացյալ աշխարհից ներմուծման գինը \$80 է, ապա Բ-ն կներմուծի և՛ մնացյալ աշխարհից, և՛ Ա-ից:

	Ա երկիր	Բ երկիր
Մաքսային միության գին	80	80
Պահանջարկ	20	50
Առաջարկ	35	25
Ավելցուկային առաջարկ	15	-25

	Ա երկիր	Բ երկիր
Սպառողի ավելցուկ	400	2500
Արտադրողի ավելցուկ	1225	625
Կառավարության եկամուտ	0	600
Ընդհանուր ավելցուկ	1625	3725